

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆԾՐԱԳՐԻ (ՄԿԾ) ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԿԾ-ի անվանումը և մասնագիտության դասիչը	011401.02.7 Քիմիա կրթական ծրագիր 011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն մասնագիտություն
ՈԱՇ-ի մակարդակ	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ (մագիստրոս)
Որակավորման աստիճան	Մանկավարժության մագիստրոս
Բուհը	Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան
Արտոնագրում	
Ֆակուլտետը	Բնական գիտությունների ֆակուլտետ
Ուսուցման լեզուն	Հայերեն
Ուսուցման ձևը	Առկա
Ուսուցման տևողությունը	«Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Քիմիա» կրթական ծրագրի մագիստրոսի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում երկու տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 120 կրեդիտ է՝ Տարեկան 60 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ):
ՄԿԾ-ի մուտքի պայմանները	Ընդունելությունը մագիստրոսի ՄԿԾ-ով իրականացվում է համաձայն «Կարգ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» ՀՀ ԿԳՆ (ԿԳՄՄՆ) 06 դեկտեմբերի 2007թ. N 1193-Ն հրամանի):
ՄԿԾ-ի նպատակը	<p>ՄԿԾ-ն նպատակաուղղված է քիմիայի բնագավառում բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը, որոնք կունենան հիմնարար մասնագիտական գիտելիքներ և անհրաժեշտ կոմպլեքսային քիմիայի ոլորտում մանկավարժական գործունեություն իրականացնելու համար:</p> <p>Ծրագրի նպատակն է ուսանողներին տրամադրել.</p> <ol style="list-style-type: none"> 1. Քիմիայի դասավանդման և հետազոտական ժամանակակից մեթոդների և գործիքակազմի վերաբերյալ գիտելիք և իմացություն, 2. Ուսումնամեթոդական նախագծերի մշակման, որակի ապահովման և ուսումնասիրման համար անհրաժեշտ գործնական մասնագիտական հմտություններ, 3. Ինքնուրույն մանկավարժական գործունեություն կատարելու համար պահանջվող կարողություններ: <p>Մասնագիտական գործունեության օբյեկտներն են.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Քիմիական տարրերը, տարբեր ագրեգատային վիճակներում պարզ մոլեկուլները և բարդ միացությունները (օրգանական և անօրգանական միացությունները և նրանց հիմքի վրա նյութերը), որոնք ստացվել են քիմիական սինթեզի արդյունքում (լաբորատոր, արտադրական) կամ բնական օբյեկտներից առանձնացված, ✓ ուսուցման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները, ✓ ուսումնամեթոդական աշխատանքների մեթոդները և գործիքակազմը, ✓ դասավանդման գործընթացները և գործընթացներում ներգրավված անձնակազմը, ✓ լաբորատոր սարքավորումները և մեթոդական ձեռնարկները, ✓ դասավանդման աշխատանքների իրականացման ծրագրային նախագիծը:

<p>ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները</p>	<p>ՄԿԾ-ի ավարտին մագիստրատուրայի ուսանողը պետք է. Գիտենա՝</p>
	<ul style="list-style-type: none"> ✓ մանկավարժական հետազոտությունների հիմնական տրամաբանական մեթոդներն ու եղանակները, ժամանակակից մանկավարժության մեթոդաբանական տեսությունները և սկզբունքները, ✓ քիմիայի զարգացման հիմնական փուլերն ու օրինաչափությունները, ✓ ժամանակակից մանկավարժության տեսական և փորձարարական հետազոտությունների առավել ակտուալ ուղղությունները, ✓ կրթության դերը քաղաքակրթության զարգացման արդի ժամանակշրջանում, ✓ մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվելաձևի կուլտուրայի էթիկական և իրավական նորմերը: <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ պլանավորել, կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով քիմիայի բնագավառի պետական օրենքների հիմնական դրույթների վրա, ✓ գիտական հիմունքներով կազմակերպել իր աշխատանքը, ✓ աշխատանքային գործունեությունում կիրառել ոչ ստանդարտ լուծումներ ✓ կատարել քիմիական նյութերի գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություններ և հիմնավորված եզրահանգումներ, ✓ մեկնաբանել քիմիական երևույթների միջև պատճառահետևանքային կապը, ✓ ղեկավարել դասավանդման մեթոդիկաների մշակման և իրագործման նախագծերը: <p>Տիրապետի՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Անձնական և հասարակական հարաբերությունները կանոնավորող վարվելակերպի իրավական նորմերին, ✓ մտածելու կուլտուրային և նրա ընդհանուր օրենքներին, ✓ տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին, ✓ հնարքների և գիտելիքների անհրաժեշտ համակարգին՝ հետագա մասնագիտական գործունեության համար վերլուծության անհրաժեշտ մեթոդի ընտրության և դրա կիրառման նպատակահարմարությանը, ✓ քիմիական նյութերի ուսումնասիրման և վերլուծության փորձարարական մեթոդներին, ✓ քիմիական նյութերի ուսումնասիրման և վերլուծության կատարման մեթոդական հմտություններին

<p>ՄԿԾ-ի յուրացման արդյունքում ձեռք բերվող կոմպետենցիաներ (առաջնորդվելով «Առարկայական նկարագրի մշակման ռազմավարություն» փաստաթղթով)</p>	<p>«Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Քիմիա» կրթական ծրագրի մագիստրոսի որակավորում ստացած շրջանավարտը ձեռք կբերի.</p> <p>Ընդհանրական կոմպետենցիաներ (այսուհետև ԸԿ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ մասնագիտական, ներառյալ գիտահետազոտական, գործունեություն իրականացնելու կարողություն, նաև միջազգային միջավայրում(ԸԿ1), ✓ մասնագիտական գործունեության ընթացքում տեղեկատվությունը վերլուծելու, ստուգելու, ամբողջականությունը գնահատելու կարողություն (ԸԿ2), ✓ ինքնուրույն և թիմում աշխատելու, թիմային աշխատանքը կազմակերպելու, դեկավարելու կառավարչական որոշումներ ընդունելու և նրանց համար պատասխանատվություն կրելու, կարողություն (ԸԿ3): <p>Ընդհանուր մասնագիտական կոմպետենցիաներ (այսուհետև ԸՄԿ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ ոչ ստանդարտ խնդիրները լուծելու համար, ներառյալ նոր առարկայական ոլորտում և միջառարկայական նախագծում, մաթեմատիկական, բնագիտական և մասնագիտական գիտելիքները ինքնուրույն ձեռք բերելու, խորացնելու և գործնականում կիրառելու կարողություն (ԸՄԿ1), ✓ մասնագիտական խնդիրները լուծելու համար յուրօրինակ չափանիշներ և ծրագրային միջոցներ մշակելու կարողություն՝ ժամանակակից ինտելեկտուալ տեխնոլոգիաների կրառամբ (ԸՄԿ2), ✓ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվություն
	<p>ստանալու, պահպանելու, մշակելու և հետարձակելու մեթոդների և միջոցների կիրառման կարողություն (ԸՄԿ3):</p> <p>Մասնագիտական կոմպետենցիաներ (այսուհետև ՄԿ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Կարողանա լուծել քիմիական խնդիրներ, որոնք համանման են արդեն դիտարկվածներին (ՄԿ-1), ✓ քիմիայից օլիմպիադաներ, վիկտորինաներ, ցերեկույթներ և այլ բնույթի միջոցառումներ կազմակերպելու, հայտնի քիմիկոսներին նվիրված աշակերտական ընթերցումներ կազմակերպելու ունակություններ (ՄԿ-2), ✓ տիպային և ոչ ստանդարտ հոգեբանա-մանկավարժական և մեթոդական խնդիրներ լուծելու կարողություն (ՄԿ-3), ✓ հանրակրթական և ավագ դպրոցներում, վարժարաններում, քոլեջներում և այլ կազմակերպություններում «Քիմիա» առարկան պատշաճ մակարդակով դասավանդելու կարողություն (ՄԿ-4), ✓ հանրակրթական և ավագ դպրոցների ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը իրականացնելու կարողություն (ՄԿ-5), ✓ տնային պայմաններում աշակերտների ինքնուրույն-անհատական աշխատանքը կազմակերպելու, կանոնակարգելու համար ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը իրականացնելու կարողություն (ՄԿ-6), ✓ խորհրդատվական կարողություն (ՄԿ-7), ✓ խմբում յուրաքանչյուր երեխայի և մանկական կոլեկտիվի զարգացման, դաստիարակվածության, կրթվածության իրական մակարդակի վերլուծման և գնահատման կարողություններ (ՄԿ-8), ✓ մանկավարժական իրավիճակներն ու գործընթացները ըմբռնելու և օբյեկտիվ գնահատելու կարողություն (ՄԿ-9), ✓ ծագած տարաձայնությունները և բխումները լուծելու կարողություն (ՄԿ-10),

	<ul style="list-style-type: none"> ✓ այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու, տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու կարողություն (ՄԿ-11), ✓ մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու կարողություն (ՄԿ-12):
Ուսուցման և դասավանդման մոտեցումները	<p>Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Դասախոսություններ (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով), ✓ Գործնական պարապմունքներ, սեմինարներ (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով), ✓ ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, նախագիծ, գործարար խաղեր և այլն), ✓ կուրսային աշխատանք, մագիստրոսական թեզ, ✓ գիտահետազոտական և տեխնոլոգիական պրակտիկաներ:
Գիտելիքների գնահատման մեթոդները	<p>Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:</p> <p>Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համարկիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը՝ հետևյալ բաղադրիչների գնահատմամբ և հաշվառմամբ.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ինքնուրույն կատարվող աշխատանքներ, ✓ Գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցություն, ✓ ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:
Մասնագիտական գործունեության ոլորտները.	<p>«Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությամբ «Քիմիա» կրթական ծրագրի մագիստրոսը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, քոլեջներում՝ որպես քիմիայի ուսուցիչ, ✓ գիտահետազոտական լաբորատորիաներում, կայաններում որպես քիմիկոս-հետազոտող, ✓ դաստիարակչական հաստատությունների մանկավարժ, աշխատակից, ✓ պետական և ոչ պետական գիտական կենտրոնների լաբորատորիաներում, որոնք հետազոտություններ են կատարում քիմիայի և հարակից ճյուղերի բնագավառում (գլխավորապես կենսաքիմիայում, երկրաքիմիայում, էկոլոգիայում, դեղագործությունում) որպես քիմիկոս, ✓ ուսումնագիտական լաբորատորիաների աշխատակից, ✓ գիտահետազոտական ինստիտուտներում քիմիկոս-հետազոտող, ✓ բուհում կամ ուսումնական միջնակարգ մասնագիտական հաստատությունում դասախոս մասնագետ:

	<ul style="list-style-type: none"> ✓ դեղագործական հաստատություններում՝ որպես դեղամիջոցների պահպանման և որակի հսկման մասնագետ, ✓ դեղատներում՝ որպես պրովիզոր-տեխնոլոգ, պրովիզոր-անալիտիկ, պրովիզոր-ֆարմակոգնոստ:
<p>Հետագա ուսման հնարավորությունները</p>	<p>«Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Քիմիա» կրթական ծրագրի ՄԿԾ-ն յուրացրած մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու</p> <ul style="list-style-type: none"> ✓ մագիստրատուրայում՝ ստանալու այլ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան, ✓ ասպիրանտուրայում՝ ստանալով հետազոտողի որակավորում: